Հայտարարություն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թ. դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված՝ «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգ»-ի դրույթներով, հայտարարում է միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերով հանրակրթական առարկաներ, «Պատմություն» (ոչ հանրակրթական), «Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ» (ոչ հանրակրթական) առարկաներ դասավանդող դասախոսների թափուր հաստիքների համալրման մրցույթ:

Մասնագիտական առարկաները կամ մոդուլները	**Ժամ**
Հայոց պատմություն (ՆՄԿԾ)	336
Պատմություն (ՆՄԿԾ)	72
Հայոց լեզու (ՄՄԿԾ)	381
Հայոց լեզու (ՆՄԿԾ)	372
Հայ գրականություն (ՄՄԿԾ)	375
Հայ գրականություն (ՆՄԿԾ)	336
Ֆիզկուլտուրա (ՄՄԿԾ)	1608
Ֆիզկուլտուրա (ՆՄԿԾ)	256
Անգլերեն (ՄՄԿԾ)	648
Աշխարհագրություն (ՄՄԿԾ)	306
Աշխարհագրություն (ՆՄԿԾ)	68
Հասարակագիտություն (ՆՄԿԾ)	236
Հանրահաշիվ (ՆՄԿԾ)	252
Երկրաչափություն (ՆՄԿԾ)	156
Քիմիա (ՆՄԿԾ)	136
Կենսաբանություն (ՆՄԿԾ)	68
Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ (ՆՄԿԾ)	72
Ընդամենը թափուր ժամեր	5678

Մրցույթին կարող է մասնակցել անձը, որ համապատասխանում է **հանրակրթական առարկաների** դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին (ունի բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ

ուսուցչական) կամ գիտամանկավարժական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ):

«**Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ**» առարկան դասավանդող դասախոսին ներկայացվող պահանջներ՝ բարձրագույն կրթության «Շրջակա միջավայրի գիտություններ», «Բնապահպանություն և բնօգտագործում», «Շրջակա միջավայրի պաշտպանություն», «Շրջակա միջավայրի պահպանություն և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործում» մասնագիտություններով շրջակա միջավայրի կամ բնապահպանության և բնօգտագործման մագիստրոսի կամ բակալավրի, մանկավարժության բակալավր ուսուցչի կամ «Բնօգտագործման տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության մագիստրոսի կամ բակալավրի որակավորում, միջին մասնագիտական կրթության «Շրջակա միջավայրի պահպանում և բնական պաշարների արդյունավետ օգտագործում» մասնագիտության կրթական ծրագրով համապատասխան մասնագետի որակավորում:

«**Պատմություն**» **(ոչ հանրակրթական)** առարկան դասավանդողին ներկայացվող պահանջներ՝ բարձրագույն կրթության «Պատմություն» և «Առարկայական ուղղվածությամբ մանկավարժություն (պատմություն)» մասնագիտություններով պատմության կամ մանկավարժության մագիստրոսի կամ բակալավրի որակավորում, բարձրագույն կրթության «Պատմություն» մասնագիտությամբ պատմության մագիստրոսի կամ բակալավրի, մանկավարժության բակալավր ուսուցչի կամ մանկավարժության մագիստրոսի որակավորում:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի փաստաթղթաշրջանառության բաժին** են ներկայացնում ներքոնշյալ փաստաթղթերը՝

1) դիմում (լրացված՝ կցված Ձև 1-ին համապատասխան),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ՝ բնօրինակը և պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (կցված Ձև 4-ին համապատասխան),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Լրացված դիմումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի **օգոստոսի 7-ից 2025 թվականի օգոստոսի 20-ը ներառյալ**՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 16:00-ն (բացի շաբաթ, կիրակի և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից), ՀՊՏՀ **փաստաթղթաշրջանառության բաժին** (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետ (կենտրոնական մասնաշենք), 3-րդ հարկ, հեռ. (+374 10(59-34-23):

«Պատմություն», «Հայոց պատմություն», «Ֆիզկուլտուրա», «Աշխարհագրություն», «Հասարակագիտություն», «Երկրաչափություն», «Հանրահաշիվ», «Քիմիա», «Կենսաբանություն», «Լանդշաֆտագիտություն և էկոլոգիայի հիմունքներ» առարկաների թափուր ժամերի մրցույթը տեղի կունենա 2025 թ. օգոստոսի 25-ին՝ ժամը 10:00-ին, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետ (կենտրոնական մասնաշենք), իսկ «Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Անգլերեն» առարկաների թափուր ժամերի մրցույթը՝ 2025 թ. օգոստոսի 29-ին՝ ժամը 10:00-ին, հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետ (կենտրոնական մասնաշենք):

Ձև 1

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
(Ֆինանսատնտեսագիտական քոլեջ)

_____

_____

_____

(նշվում է թափուր տեղի անվանումը)

Մանկավարժի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու նպատակով
ՀՊՏՀ ռեկտոր պարոն Ա.Վ. Գրիգորյանին

_____ -ից

(դիմողի անունը, հայրանունը, ազգանունը)

_____

(դիմողի հաշվառման վայրը)

_____

(դիմողի հեռ. (աշխատանքային, բնակ., բջջ.)

_____

(անձնագրի սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել)

Ծնված՝ _____

(օրը, ամիսը, տարին, վայրը)

Դ Ի Մ ՈՒ Մ

Ծանոթանալով Մանկավարժի թափուր պաշտոնի համար տրված հայտարարությանը, մրցույթի պայմաններին և անցկացման կարգին՝ խնդրում եմ գրանցել ինձ որպես մրցույթի մասնակից

Քաղաքացիությունը _____

Դատապարտվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_____

Դատվածությունս հանված կամ մարված է՝ այո, ոչ (ընդգծել)_____

Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_____
Դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվել եմ՝ այո, ոչ (ընդգծել)_____

ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1030-Ն որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկի որևէ հիվանդությամբ տառապում եմ, չեմ տառապում (ընդգծել) _____

Համակարգչային գրագիտությունը _____
_____

(տիրապետման մակարդակը, համակարգչային ծրագրերի իմացությունը)

Կից ներկայացնում եմ մրցույթի մասին հայտարարությունում նշված փաստաթղթերը:
Նախազգուշացված եմ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____ «____» _____ 20 __ թ.

Ձև 4

Ինքնակենսագրություն

1. Աշխատանքային գործունեություն (վերջին աշխատանքի վայրը լրացվում է առաջինը)
2. Կրթություն (մասնագիտական կրթության որակավորման աստիճանը՝ դիպլոմ(ներ), կրթության վկայագրերը, հավաստագրեր, վկայականներ)
3. Կոչումներ
4. Որակավորման տարակարգ
5. Հրատարակած հոդվածներ
6. Լեզուների իմացություն
7. Համակարգչային իմացություն
8. Այլ տվյալներ: